ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1618 26.03.2016թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի հունվարի 27-ին թիվ 2621/1602 գրությամբ Դիտորդական խումբը Ձեզ էր ներկայացրել ՀՀ ոստիկանության Արմավիրի ՄՎ Վաղարշապատի ՁՊՎ-ում արձանագրած որոշ թերություններ: Տվյալ գրությանը ի պատասխան Ձեր 19.03.2016թ-ի թիվ 2/2-1-1042 գրությամբ տրվել էր մեկնաբանություն :

Ձեր կողմից տրված մեկնաբանության որոշ կետերի հետ Դիտորդական խումբը համաձայն չէ, որովհետև. առաջին կետով Դիտորդական խումբը նշել էր, որ Գ.Ն-ն հանձնուք էր ստացել և համապատասխան գրանցամատյանում չկար ոչ մի գրառում, որին ի պատասխան Դիտորդական խմբին ներկայացվել էր, որ համապատասխան գրանցամատյանի 18 և 19 համարների տակ գրանցված է Դիտորդական խմբի կողմից ներկայացրածը: Կից Ձեզ ենք ներկայացնում այցելության օրը համապատասխան գրանցամատյանի լուսանկարը, որտեղ հերթական համարը ավարտվում է 16-ով և տվյալ օրը 17,18,19 համարների գրառումներ չեն եղել կատարված: Այստեղից հետևություն, որ Դիտորդական խմբի անդամները չեն ստում և դրա անհրաժեշտությունը չունեն և 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված փաստերը իրականություն են , որը հերքում է Վաղարշապատի հերթապահ մասի պետի ժամանակավոր պաշտոնակատարը:

Խնդրում ենք ևս մեկ անգամ ուսումնասիրել փաստերը և տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄՏՄՈ № 1526
28 03 16

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60, Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Մուտք թիվ 9852
28 03 16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

0025 ք.Երևան, Նալբանդյան 130, Հեռ.՝ (010) 59-65-94, Ֆաքս՝ (010) 59-63-11, էլ.փոստ staff@police.am

№ 2/2-1-1560 «28» 04 2016թ.

Ձեր 26.03.2016թ. թիվ 2621/1618 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ տիկին Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2016թ. հունվարի 20-ին ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի ՁՊՎ կատարած այցելության ընթացքում արձանագրված խախտումն ուսումնասիրվել է ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Արմավիրի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն:

Ծառայողական քննության արդյունքներով հիմնավորվել է ձերբակալված Գ.Ն-ի՝ 2016թ. հունվարի 20-ին և 21-ին հանձնուք ստանալու վերաբերյալ ՁՊՎ-ի վարչակազմի կողմից <<Հանձնուքների հաշվառման>> գրանցամատյանում գրառում չկատարելու հանգամանքը, որի կապակցությամբ ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնի հերթապահ մասի պետի ժամանակավոր պաշտոնակատարը և ՁՊՎ ոստիկանը ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ոստիկանության շտաբ